հանաները կը պարգևատրէ ծաղկեայ փիլոններով և գլխու գոտիներով ու Երեմիայի կ'ընծայէ «մի փէշկիր մահրամա շինած»։

Հետևեալ օրը, Ապրիլ 27 Չորեքշաբթի, կաթողիկոսը կը մեկնի Կ. Պոլսէն ու կ'երթայ Ներսէս հայրապետի կղզին (Սիվրի ատա)։ Իրեն յուզարկ գացողներուն մէջ է նաև Երեմիա։ Գիշերը այդ կղզին կ'անցընէ ու օրհնելով զինք ուղևորելու եկողները՝ կը մեկնի Պրուսա, ու Երեմիա իր ընկերներով յաջորդ օրը կը դառնայ Կ. Պոլիս։

Կաթողիկոսը մինչև Մայիս 25 կը մնայ Պրուսա՝ հիւր տեղւոյն անուանի ազգային Անտոն Զէլէպիի։ Տէր Մարտիրոս լսելով հայրապետին հոն յամենալը՝ իր զաւկին Երեմիայի, նաև Ոսկան երէցի ու Ներսէս վարդապետի Ներսէսին հետ Մայիս 16ին կ'ելլէ Կ. Պոլսէն ու հետևեալ օրը երեկոյին կը հասնի Պրուսա. տեղացիք կը տանին զիրենք Անտոն Զէլէպիի տունը։ Կաթողիկոսը յաջորդ օրը դառնալով Անտոն Զէլէպիի մեծ տունէն՝ պատուով կ'ընդունի զիրենք ու քովէն չի հեռացներ Տէր Մարտիրոսը. իսկ Երեմիա կը հիւրընկալուի քաղաքի Պետրոս երէցէն, որուն ծանօթացած էր Երուսաղէմի մէջ իր ուխտի գացած տարին։ Մայիս 21ի Շաբաթ երեկոյին ուշ ատեն լուր կը բերեն թէ Պրուսա եկած է Դաւիթ Արևելցի, այն՝ որ յառաջագոյն չորս անգամ պատրիարք եղած էր Կ. Պոլսոյ։ Այս անգամ, կը գրէ Երեմիա, անիկա գացած էր Իզնիմիտ՝ անկէ կրկին մայրաքաղաք երթալու և նորանոր յուզումներ պատճառելու դիտումով։ Երբ Կ. Պոլսեցիք կը լսեն Արևելցիի մէջտեղ ելլելը՝ վեց եկեղեցիներու աթոռակալները Իզնիմիտ կը ղրկեն, որպէսզի բռնադատեն զայն ետ կենալու Կ. Պոլիս երթալու նպատակէն ու խորհուրդ տան որ երթայ միա-